

**ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Բանախոսական գիլտությունների թեկնածու**

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋԱԴԱՐՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՄԻ ԿՐԹԱՎՇՎԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայ կյանքի Բազրութունաց շրջանը մտավոր առաջընթացի և աննախադեպ վերելքի ծաղկում դարեր եղան: Այդ ամենի հիմքում ընկած էր նաև հայ մանկավարժի տքնաշան աշխատանքը՝ աստվածաբանական, փիլիսոփայական և գրական հանճարեղ հղացումներով: Ուսուցիչը, մեր մեծերի համոզմաբ, գործում էր ըստ «Բրամանին Աստուծոյ»¹ և համարվում էր ցրված աշակերտներին վարժարանում հավաքողը, իմաստություն տարածողը: 11-րդ դարի հայ կյանքի հշանավոր դեմքերից էր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին /990-1058թ./:² Նա ժամանակի ամենահիմուն և զարգացած ուսուցչապետերից էր³, ով մանկավարժությունը վերածեց մարդու բարոյական դաստիարակության միջոցի, իր գերխննիրը համարելով համակողմանիորեն դաստիարակել նոր սերմնին: Կ. Կոստանդիան առանձնացնում է Մագիստրոսի կարևորագույն սկզբունքներից մեկը, թե «Զար ախտ ամձին հանդիպի ի վատթար հրահանգից և յանուառմնութեննէ»:⁴

Մարդու բարոյական կերտվածքի մեջ ուսուելը դիտվում էր իբրև առաջնային գործոն: Հետևաբար անհրաժեշտ էր նանուկմերի կրթությունը և դաստիարակությունը երրեք չափեականությունը, դրանում չթերանալ:

Վկայություններ կան այն մասին, որ Մագիստրոսը դասավանդել է մի քանի ճեմարան-օւերու: Այդպիսիք էին Անիի, Սամարնի, Կեչառիսի, Բջջի, Հավուց Թառի և Ս. Կարպետի վանքերի կրթարանները, որոնցից բացի նաև ուներ նաև իր հիմնած ճեմարանը: Ուսումնական այս հաստատությունների մասին կարելի է ասել, որ նրանք բարձրագույն դպրոցներ էին և աստիճանաբար վերածել էին համալսարանների կամ այդ ճամապարհին էին: Իրենց ծրագրերով դասավանդվում էին այն առարկաները, որ ուսուցանվում էին միշնադարյան նորաստեղծ համալսարաններու: Սակայն նեռևու բավարար տեղեկություններ չկան բարձրագույն այդ դպրոցների ֆակուլտետների գոյության մասին /ինչպես, օրինակ, Ա. Օթի/, թեև այդ օրերից են սկսում գործել Նարեկա /հիմ. 943թ./, նույն՝ Ա. Օթի /11-13 դր./, Կարսի /11-12 դր./, Սսի /12-14 դր./, Գլաձորի /13-14 դր./, Տաթևի /14-15 դր./ վարդապետարաններն ու համալսարանները⁵: Գրեթե բոլորում էլ անցնում էին միևնույն ծրագրով՝ առանձնապես ոչ մեծ տարբերություններով: Գ. Ր. Մագիստրոսն այդ ծրագրերի մշակողներ

¹ Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Ե., 1995, լգ 57:

² Մ. Արեգյան, Երկնք, հ. Դ, Ե., 1970, լգ 33-51:

³ Թ. Չուհարյան, Նայ գրականության մեթոդիկա, Ե., 1980, լգ 20-22:

⁴ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ակերսանդրապուր, 1910, լգ 297. այսուհետև՝ Թղթեր:

⁵ Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարան, Ե., 1973, լգ 11-89:

րից և կյանքում դրանց գործադրող ներից մենք էր⁶: Մ. Աբելյանը գրում է. «Նա ոչ միայն ուրիշներին հորդորել է գիտությամբ պարապելու և դպրոց ունենալու, այլև ինքը շարունակ սիրով ու ամիսներ հետևել է դրամ՝ նշանաբան ունենալով «պատարում ընթերցմամբ... լուսաւորել զանձն»⁷: Ուսումնական համակարգը պետք է հետևյալ առարկաները ներառել իր մեջ.

1. Հին և նոր Կոտակարանների ուսուցում և առասպելավարժություն.

2. Քաղաքական արվեստներ /աստղաբաշխություն, երաժշտություն, երկրաչափություն, մաթեմատիկա/.

3. Եղյակ արվեստներ՝ քերականություն, հոեստորական արվեստ և դիալեկտիկա⁸, թարգմանությամբ հանդերձ «...և ապա սահմանացն պարունակեալ»: Այստեղ նկատելի է, որ սահրական կրթությունը, որպես պարտադիր ուսուցման պահանջ, ամբողջանում է Ա. Գրքի և առասպելաբանության ուսուցմամբ: Այդ մակարդակում հանձնարարվում է «հոմերական», ինչպես և «պլաստոնական», «արիստոտելական», «պիտանգորական» ու այլ «արտաքին» հետինականների մասունացների ընթերցումը: Միշնակարգի ծրագիրն ավարտվում է քառյակի ուսուցմամբ, որին Մագիստրոսն ավելացնում է նաև թարգմանության տեսությունը, ինչը բոլորովով նոր մոտենում է:

Գիտնականը կանգ չի առնում և այս սահմանի վրա: Ուսման հետագա ընթացքը պայմանավորում է եղյակ արվեստների ուսուցմամբ: Այստեղ էլ նա լրացնում է կատարում՝ եռյակին հավելելով Դավթի «Սահմանաց» գրքի ուսումնասիրությունը: Այս ծրագիրն անտիկ դպրոցի յոթ ազատ արվեստների ուսուցման տեսությունն է, որը լրացված է նոր առարկաներով: Այն ոչ միայն առաջադիմական էր, այլև բավարարում էր ժամանակի պահանջներին, բխում էր միշնադարյան կրթության ու գիտության հիմնարար սկզբունքներից: Լավագույն առողջությունը կատարում է միշնադարյան նոր դպրոցի հիմնադիրներից մենքն է:

Հայ Մագիստրոսի՝ ուսուցումն ավելի յղուրին կլինի, եթե դասավանդվող առարկաները մատուցվեն տարբերակված ձևով, այլապես բուն նպատակին հասմել հնարավոր չի լինի, և սովորական աշակերտը չի կարող դառնալ իմաստանությունը: Հարկ է նախ բնական գիտություններն ուսանել և հետո՝ աստվածաբանությունը, «զի երկին եւնարան լիցի նոցա»⁹: Միշտ կարենոր հանգամանք ևս. 10-11-րդ դարերի բոլոր տիպի դպրոցները տալիս են բազմակողմանի կրթություն և ընդհանուր զարգացում: Մյուս կողմից՝ այդ հարցերում խիստ նախանձախների եկեղեցական ու հոգևոր գործիչներն առաջնային տեղ են հատկացնում ավետարանական մեկնություններին՝ դրանցում տեսմելով սուրբգրային խոսքը ճիշտ հասկանալու և Վերծանելու ճանապարհը¹⁰:

Հայ մանկավարժական միտքը առաջադիմել է մտավորականության շնորհիվ: Վերջինս,

⁶ Լ. Խաչիսյան, Գիրքոր Պահլավոնի Մագիստրոս, Լու Անջևնս, 1987, լօ 259-329:

⁷ Մ. Աբելյան, Երկիր, հ. Դ, լօ 37:

⁸ Ս. Միմիքարյան, Գր. Մագիստրոսի կյանքը և գնդարվեսպական ժառանգությունը, Ե., 2001, լօ 25:

⁹ Թղթեր, լօ 8:

¹⁰ «Մեկնություն ժամանակարգութեան արարեալ երանելոյն խոսրովու Անձնացեաց Եպիսկոպոսի, և կարգատեսական Մովսէսի գիտնական վարդապետի», Օրթագիոյ, 1840, լօ 5-7: Նաև Ռ. Ռ. Թամրապյան, Նարենցան դրաբուրք, Ե., 1999, լօ 43-45:

որպես հոգևոր դասի կարևոր մաս, աճեց հենց նրա ներտում Եկեղեցու միջոցով զարգաց-
ալով գիտությունը և կրթությունը¹¹: Հոգևորական-մտավորականը նաև ստանում էր վար-
դապետի գիտական աստիճան, քարոզում Լուսավորչի ուսմունքը¹², կրում վարդապետա-
կան գավագան, որպես նշանակ Հայ Եկեղեցու կողմից տրված քարոզելու և վարդապե-
տելու իրավունքի¹³:

Սամահնի վաճքի իր ուսուցչապետերին ու նաև գործընկերներին Մագիստրոսը խո-
ւարժարար գրում է. «Հիշելով գիտական ծերոցի ծայրագումից խնամս առ մեզ և խրատ և
ողորմութեամբ բարեկարգութիւնս, և զերիտասարդացն, որք ի վարժարանս, հոեսորա-
կան և երաժշտական զնոցայն զմտու ածեալ հանդէս և զմրցումն և զգեղեցիկ մոլո-
թիւնս....Վերառեցեալ»¹⁴:

Այսպես են ճեմարանակներու գեղեցիկ մոլությամբ մրցում իրար հետ և այսպես ստա-
նում կրթություն ու դաստիարակություն, ինչն անգամ չկա ո՛չ սկյութների, ո՛չ թերեւացինե-
րի մոտ: Մագիստրոսը ստեղծում է նաև այդ համեստ, բայց իմաստուն ճգնակյացների դի-
մանկարը, որոնք թեթև մորթիներով են մարմինները ծածկում, սակայն դիմանում են
ձմուն ցրտին ու ամուս տապին, հաճախ սննում «թօվիկով» միայն, կրում ծանր երկաթյա
խարազանազգեստ ու քրոջ, որպեսզի երեք չմոռանան իրենց հոգևոր կոչումը, իրենց
պատասխանատվությունը Տիրոց առաջ, որը զայիս է «ի մերոյն Պարբեւ Սրբոյն Սահի-
կայ»: Բայց որքան հոգատար են նրանք իրենց սաների նկատմամբ, ինչպես ուն սիրում
նրանց, անմնացրող նկրուուվ տալիս իրենց անբավ գիտելիքները, ինչը սաները խորաց-
նում են իրար հետ բանավեճերի և մրցությունների միջոցով:

Որպես ուսուցչապետ՝ Մագիստրոսը նվիրված է իր սիրելի աշակերտներին: Նա առանձ-
գործառություն է խոսում Բարսեղ և Եղիսակ Եղիշյաների, Սաղօս գիտնականի /Ա. Կա-
րապետի վաճք/ , իր որդի վեստ Վահրամի և ուրիշների մասին:

Լսելով, որ Պետրոս Կաթողիկոսը Բարսեղին և Եղիշյաների է Արհաստուել
ուսումնասիրել, տագմասպում է, քանզի նրանք տարիքային առումով փոքր են ու ուսուս չեն
անցել այն անհրաժեշտ դասընթացը, որպեսզի կարողանան ուսումնասիրել իրենց ուսուց-
չի հանձնարարածը: Այդ մասին գրում է. «Արդ լուայ եթէ Աստուծոյ փոխանակ մեր տուեալ է
ձեզ Արհաստուել. կամիմք եթէ առաքէք դա մեզ, քանզի նախ պարտ է զքերականութիւնն
հանդերձ թարգմանութեամբն ուսանել...., և զկմի այսր զիոնտորականն»¹⁵: Հետաքրքիր է,
որ դրա փոխարեն Գր. Մագիստրոսը ցանկանում է նրանց հանձնարարել Արհաստուելի
տիեզերագիտությունը, որտեղ «ասացեալն յաղագ երկնային մարմնոյն և զնդատեսու-
թեան երկրի կամ յաղագ օրինադրութեան կենցաղոյ»¹⁶:

Այսուեւու անդրադառնում է Պորփիրի փիլիսոփայական աշխատություններին, որ
կապված են հասկացությունների սահմանումների հետ: Ուրեմն նա խատազումն հաշվի է

¹¹ Զ. Ավելիքյան, Մարդու Եղանակի հայ գրականության մեջ, լ. 119-122:

¹² Մ. Արևոյան, Երկիր, հ. Դ, լ. 175:

¹³ Հ. Տաճար Եարքաման, «Վարդապետ»-ը Հայ Եկեղեցու միաձողութեան մեջ, Վենեգիկ, 2001, լ. 52-71:

¹⁴ Թղթարք, լ. 136-137:

¹⁵ Նույն գլուխ, լ. 105:

¹⁶ Նույն գլուխ, լ. 106:

առնում աշակերտների տարիքային առանձնահատկությունները՝ պարփակյան հաշվառումով։ Այս ամենի հետ միասին նա կարևորում է աշակերտների մտավոր ունակությունները, ինտևում Պլատոնի խորհրդին, թե «Աներկրաչափական ոք մի՛ ներամտեսցէ, ...զի մի՛ ոք անկատար ի քաղցն ենթակայէ մտցէ ի լսարան»¹⁷։ Լսարան մտնողը պետք է տիրապետի քայլակին, այլապես նա տեղ չունի։ Թող նրանցից յուրաքանչյուրը ինտևի հյուսնի բարի օրինակին, որն ինքն անձամբ չի կորում փայտն անտառում կամ տեղափոխում։ Նրա գործն է սղոցել ու հարթել այն, որից ինտո գործիքներ պատրաստել։ Ուայլ մարդիկ եւ իրենց աստվածաբանական գործով պետք է զբաղվեն, այլապես ոչինչ չի ստացվի։

Իսկ ծովով ու ինեղ աշակերտներին բարդ ու խրթին հանձնարարություններ է տալիս, որ նրանք տքնեն ու այդ ճանապարհով հասնեն արդյունքի։ Նման դեպքերում իր թղթերին հաղորդում է համելուկային բնույթ¹⁸, որ նրանք փորձեն վերծանել դժվարին գրվածքը։ Մագիստրուսան ուսուցման գործընթացում կարևորվում է նաև երեխաների կամացին հատկությունների դաստիարակումը, որ ամենաառաջնային տեղում է հայրենասիրությունը։ Այդ պարագայում միշտ կարևորվում է նախնիների հիշատակի նկատմամբ առանձնահանուկ հարգանքը։ Քաջակերելով որդում՝ հորդորում է։

Արդ միլարեայն դու պնդեա՛ զլայնալիճ հայրենին։

Զերեքթենեանն դու մխեա՛, յառաջ մատի՛ր և քաղեա՛։

Այս քեզ Բէլայն հաս հանդէս և Թորգոմեանն Հայկայ։

Աճապարեա՛ և փութա՛, զի ես Կադմեանն Արամեան։

Ահա հրոսակը աճեցին, ահա հասին քեզ քաղենայք։

Այլ դու Տէրամը զօրացի՛ր և Յիսուսի պարծեցի՛ր¹⁹։

Որդուն սովորեցնում է նախ իր հզոր նախնիների քաջագործությունները։ Լինել նրանց պես ուժեղ ու կորովի, չերկնչել թշնամուց։ Հաղթել պետք է ոչ թե թվաքանակով, այլ ոգով։ Դրա օրինակն առասպեկալական նախնին է՝ Հայկը։ Չի մոռանում սովորեցնել պատաճի Վահրամին նաև բանատեղծական արվեստի Ազգությունները՝ այս դեպքում ևս մնալով որպես իմաստասեր-ուսուցչապետ։ Նա մշտապես հոգում է աշակերտների գիտելիքների համալրման համար։ Անկախ տարիքից՝ մարդ պետք է մշտապես ընթերցի և զբաղվի իր ինքնակրթությամբ, իսկ եթե ծովանում է, ապա նրան պետք է պատժել։ Կիրակոս հովն դպրին, որ իր նամակագիրներից մեկն էր, զայրացած գիտնականը հանձնարարում է ծերության հասակում լրացնել գիտելիքների պակասը՝ ընթերցելով։ «զմատեանն երրորդ Գաղիանոսի ի շորորդում տառի իրում եպիդիմական տիմին տրամաբանութեան, որ ի սակա կազմութեան մարդոյ, և զՍիսալիոսին, որ յառաջնումն մատենի ի բաղկացութենէ

¹⁷ Նոյն գնդում, լ.9 թ.:

¹⁸ Ա. Ալեքսանյան, Նայ միջնադարյան նամակը /4-14-րդ դարեր/, Ե., 1997, լ.9 186-187. Գ. Մևսնիշյան, Գրիգոր Մագիստրոսի «Գամակրականի» ամրողական լուծումը, Վիննեա, 1912, 157 լ.9:

¹⁹ Թղթեր, լ.9 234:

սերմնառութեամց»²⁰: Լավ տիրապետելով նաև բժշկագիտության սկզբունքներին ու տեսական գիտելիքների աղբյուրագիտական մասին՝ նա կարող է դասեր տալ և սկսնակ գիտնականներին:

Գր. Մագիստրոսը և մյուս ուսուցչապետները մշտապես մտահոգված էին նաև նայ դպրոցի դասագրքերի հարցով: Իր որդի վեաս Վահրամի խնդրանքով նա գրում է իր հայտնի «Մեկնութիւն քերականին» աշխատությունը²¹, որը ներառում էր նախորդ բոլոր հայ քերականների մեկնությունները և բավարարում ժամանակի պահանջներին իբրև դասգիրք²²:

Գր. Մագիստրոսը միջնադարյան Հայաստանի հշանավոր գիտնական-մանկավարժներից է, մեծ նորարար և դպրոցաստեղծ: Նրա գործը շարունակել են նրա սաները և հետագա ժամանակների հշանավոր մանկավարժները՝ գիտակցելով իրենց կատարածի կայութությունը, հարստացնելով հայ միտքը նոր ձեռքբերումներով:

²⁰ Նոյն գիրում, էջ 113:

²¹ Լ. Խաչերյան, Գրիգոր Պահկալոնի Մագիստրոս, էջ 348, բնագիրը՝ էջ 357:

²² Գ. Զահոռելյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները իին և միջնադարյան Հայաստան /5-15-րդ դդ./, Ե., 1954, էջ 61: Նաև՝ Դուուչն Փրակնելի և Արմանակ տօլկօտելու, Պետրոգրալ, 1915, ս. XLII-LXX, 221-250.